Ծանուցում Մուշեղ Իգիթի Սարգսյան/ՀԾՀ՝ 2511880105/ վկ. 12385087

2026-11-04 11:08:26

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 22.08.2024թ. տրված թիվ ԱՐԱԴ/2905/02/23 կատարման ենթակա ակտի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնում 23.08.2024թ. հարուցվել է թիվ 12385087 կատարողական վարույթը։

Կատարողական վարույթով պետք է Մուշեղ Իգիթի Սարգսյանից հօգուտ հայցվոր Նաիրա Վարդանի Խաչատրյանի բռնագանձել ալիմենտ անչափահաս երեխաներ Նարե Մուշեղի Սարգսյանին / ծնված 04.01.2014 թվականին , ծննդյան վկայական ԱԲ No. 305228/ , Սուսաննա Մուշեղի Սարսգյանին / ծնված 10.04.2010 թվականին, ծննդյան վկայական ԱԲ No. 059678/ պահելու համար Պատասխանողի վաստակի և /կամ այլ եկամտի մեկ երրորդի չափով , որը սակայն չի կարող պակաս լինել ամսական 30 000/ երեսուն հազար / ՀՀ դրամից՝ յուրաքանչյուր երեխայի համար: Ալիմենտը հատկացնել 08.08.2023 թվականից սկսած։

Կատարողական վարույթի շրջանակում արգելադրվել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Շենգավիթ, Արտաշիսյան փ., 46 շենք, բնակարան 37 ԱՐԱԳԱԾՈՏՆԻ մարզ, ԱՊԱՐԱՆ ԳՅՈՒՂ ԱՐԱԳԱԾ, 14-րդ փողոց 3 տնամերձ հողամաս, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, վկայական՝ 2772487 հասցեի անշարժ գույքը, որը ենթակա է հարկադիր իրացման։

Տեղեկացնում ենք, որ

«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝

(...)

2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ (որը ներկայացված է գույքի աշխատանքների սակագների վերաբերյալ հավելված 1-ում) գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Ծառայության 900018007832 դեպոզիտ հաշվին։

Որպես տվյալ գույքի սեփականության մասնակիցներ տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի (որը կազմում է 15.000 ՀՀ դրամ) գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության 900018007832 դեպոզիտ հաշվին։

Միջնորդության բացակայության պարագայում, գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (1,108,800 ՀՀ դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 887.040 ՀՀ դրամ, որը պակաս է Կառավար□թյան 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1709-Ն որոշմամբ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագ□յն գ□մարից (7,800,000 դրամ) ։

ծանուցում ձև 1.pdf

37460713476

harkadir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա